

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԵՒ ՄԱՐԱՄԵԼԻՔ

Դրամատիկական պօէմա դիւցազնական ժամանակներից

Պ Օ Է Մ Ա Յ Ի Ա Ն Ձ Ի Ն Ք

ԴԱԻԻԹ, Մհերի որդին.

ՁէնՈՎ-ՅՈՆԱՆ, Դաւթի հօրեղբայրը.

ՍԱՌԻԱ, Ձէնով-Յոնանի կինը.

ԳԻԻԼԼԱՋ, պառաւ.

ՄՍՐԱՄԵԼԻՔ, Մարայ տէրը.

ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒՄ, նրա կինը, Դաւթի ժայրը.

ԼԵՅԼԱ, Մարամելքի աղջիկը.

ԿՈՍԲԱԴԻՆ, Մարամելքի սիրելին.

ՉԱՐԽԱԴԻՆ, Մարամելքի մերձաւորը.

ՍԻԻԴԻՆ

ԲԱԴԻՆ

ԾԵՐՈՒՆԻ

Որսկաններ.

Դաւթի զինակիցները.

Պահապաններ.

Ժողովուրդ՝ տղամարդիկ, կանայք, աղջիկներ, մանուկներ.

Ծառայ Ձէնով-Յոնանի տանը.

Թիկնապահներ.

Պ Ա Տ Կ Ե Ր 1.

Կորեկի արտ, որի ձախ կողմում երևում է մի փոքրիկ կիսաւեր խրճիթ: Արտի շարունակութիւնը կազմում է մի դաշտավայր. հորիզոնում լեռներ: Արտի մէջտեղում մի ձողի վրայ կանգնեցրած է խրտուիլակ՝ թռչուններին վախեցնելու համար:

Պառաւ Գիւլնազը պզգած է կորեկի մօտ և քաղհան է անում որոմները: Նա մարմնով խիստ վտիտ է, խիստ դուռնատ. քիթը և կզակը սուր և առաջ թեքուած. դէմքի վրայ անթիւ

Ապրիլ, 1905.

կնճիւնների ծալքեր. մաղերը սպիտակ և գզգզուած: Լաթէ լայն
գօտու մէջ խրած է թեշիկը և մի գունդ բուրդ:

Խրճթի առաջ դրան մօտ միակ ծառը մի հին ուռի է,
խիստ ծուռ ու մուռ աճած: Նրա տակ շուաքում ընկած է մի
հատ կոճղ, կեղևը բոլորովին մաշուած:

Գարնանային մի պայծառ առաւօտ է: Այս ուռնի կողմից
լսում են լորերի հատուկտոր հնչիւններ. աւելի հեռուից՝ հով-
ուական սրնգի ձայն:

Գիւլնազ. էրնէկ խմանամ, էս փուճ խոտերը

Ինչի՞ համար է ըստեղծել Տէրը.

Քանդում ես քանդում, էլի ճար չը կայ.

Խեղդեցին արտըս, Աստուած է վրկայ:

Չորանան, փըտէն ձեր արմատները.

Լաւ բան լինէիք, չէիք բազմանայ:

(Խրճթի կիսաբաց դռնից դուրս են թափում հաւերը և
մտնում են արտի մէջ: Գիւլնազը շարացած վեր է կենում և իր
կորագլուխ գաւազանով սկսում է նրանց քել ներս):

Հիմի էլ սրանք... իրար ետեկից...

Աստուած, ազատի՛ր ինձ սըրանց ձեռից:

Սըրանց ձեռի՛ն էլ ես գերի մընամ:

Դէ, ներս գընացէք, թէ չէ, այ, կը տամ...

Կորէք... քիշ-քիշ-քիշ... ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ... հայդէ...

(Հաւերին ներս անելուց յետոյ՝ դուռը փակում է, գօտի-
կից հանում է թեշիկն ու բուրդը և նստելով կոճղի վրայ՝ ըս-
կըսում է մանել: Քթի տակ մըմուռ է մի անխօս եղանակ՝ մե-
լամաղձոտ, միակերպ և նման ճախարակի ձայնին: Այդ ժամա-
նակ Դաւիթը վազելվազ մտնում է կորեկի մէջ և կոխկրտելով
արտը՝ կամենում է անցնել միւս կողմ):

Այ տըղայ, արտըս հէր ես կոխկրտում,

Գետինը մըտած, դու չե՞ս ամաշում...

Գըրճղը տանի, մահըս տանի քեզ,

Որ իմ ապրուստըս ինձնից չը կըրտես...

Խըղճմըտանք չու՛նիս, ոչ ու փուճ էլած...

Դաւիթ Նանի՞ ինչի՞ ես այդպէս շարացած:

Գիւլ. Այ նանին հանի՛ քո ջուխտ աչքերը...

Դաւ. Նանի ջան, վայ ինձ, մյդ է քո սէրը,
Այդպէս կ'անիծե՞ն ինձ նրման որբին:
Գիւլ. Բաս ի՞նչ գործ ունիս իմ կորկի միջին:
Ձեռ տեսնում որ ես
Պահում եմ արտըս աչքիս լրսի պէս:
Ձէ որ սա է իմ սաղ տարուայ հացը,
Սա է իմ բոլոր եղած-չեղածը...
Բացւում է թէ չէ աղօթարանը,
Մինչև իրիկուն արևի տակին,
Պահապան շան պէս՝ կանգնած դռանը
Իմ արտիս հետ եմ, նայում իմ կորկին:
Մի ըոպէ վըրից աչքս չեմ թեքում,
Մի ըոպէ մօտից ես չեմ հեռանում.
Կըտրել եմ քունըս,
Մոռացել տունըս.

Մըտերին փախցնում, հաւերին քշում...
Հիմի էլ միայն դու էիր պակաս,
Որ իմ կորեկը ոտիդ տակը տաս...
Ա՛խ, Մըհեր, Մըհեր, լուսնոգի՛ Մըհեր,
Միթէ քո որդին սա պիտի լինէր:

Դաւ. Նանի, հօ Դաւթից, քեզ էլ է յայտնի,
Մարդկանց չար մըտքով վընաս չի հասնի.
Թէ անում էլ եմ մէկին վատութիւն,
Դա ի՞նչ է—միայն մի անփորձութիւն,
Կամ ջահիլութիւն, որ շուտով կ'անցնի:
Ա՛յ, եթէ կ'ուզես, ես ասեմ, նանի,
Ինչպէս պատահեց, որ արտը մըտայ:
Արտի ետեւում
Լոր էի որսում,
Յանկարծ գառան չափ նապաստակ տեսայ:
Ջարնել ուզեցի, դէպի դէս փախաւ,
Ես էլ քամակից: Նա արտը մըտաւ,
Ու ես էլ հետը... ու յետոյ, երբ ես...
Գիւլ. Է՛հ, Դաւթի, Դաւթի, ի՞նչ ասեմ ես քեզ:
Խեղով իսկ և իսկ երեխայ ես դու:

Ի՞նչ կը վայելէ մի տըղամարդու
Արտերըն ընկած՝ լոր ու ծիտ զարնել,
Նապաստակների քամակից վազել...
Ոչ թէ լոր ու ծիտ դու պիտի որսաս,
Այլ խոշոր եղնիկ, այծեամ ու վարազ:
Որս անել կ'ուզես, գընա էն սարեր,
Ուր օղորմածիկ հէրըդ որս կ'անէր:

Դաւ. Նանի, ի՞նչ սարեր... Ես չեմ իմանում:

Գիւլ. Ա՛յ, Որսի-սարը Մըսրայ սահմասում:

Դաւ. Այնտեղ, ասում ես, լաւ երէներ կան:

Գիւլ. Ամեն տեսակի, ընտիր, պատուական:

Դաւ. (սիս ուրախ) Ուղիղ ես ասում... Թէ Աստուած
սիրես...

Գիւլ. Ի՞նչ հաշիւ ունիմ, որ սուտ խօսեմ ես:

Դաւ. (լուջ, մտախոհ) Ա՛խ իմ հօրեղբայր, ախ, Ձէնով-
Յոնան,

Ես քեզ ի՞նչ ասեմ... գըրաստի նըման,
Ինձ կոյր ես պահել,
Բան չես սորվեցրել:
Վայ էն խեղճ որբին, որ մընաց անտէր.
Թըշամիս էլ հեշ չթողնի որբեր:
Աստուած վեր կ'առնի: Մըհեր ունենայ.
Սեղան-սարի մօտ հարուստ որսատեղ,
Ու նըրա որդին գառնարած դառնայ
Կամ ձեռըն առած մի նետ ու աղեղ՝
Պառաւի արտում լոր ու ծիտ որսայ:
Թէ դու խելք ունիս, Մըհերի տըղայ,
Քո հօր երկրին լաւ տէրութիւն արա,
Ձէնով-Յոնանից մեզ օգուտ չկայ:

Գիւլ. Թէ դու խելք ունիս, Մըհերի տըղայ,
Քո հօր երկրին լաւ տէրութիւն արա,
Ձէնով-Յոնանից մեզ օգուտ չկայ:

Դաւ. Ուղիղ ես ասում, նանի ջան, ուղիղ.
Դաւիթը մենակ մարմնով է մի փիղ,
Բայց կարճ է խելքը, երեխայ է դեռ:
Ափսոս անօգուտ անցած տարիներ...
Է՛հ, վընաս չ'ունի.
Վերջըն է բարի:

Դաւիթըն այսպէս անխելք չի մընայ.
 Կը բացուի միտքը, շատ բան կիմանայ:
 Հէնց այս օրուանից ես վերջ եմ տալիս
 Իմ փուճ մանկութեան, իմ ջահիլութեան.
 Երկինքը վըկայ, ես տէր եմ խօսքիս—
 Ես պէտք է լինեմ Մըհերի նման:
 Քո հօր արժանի զաւակ չըլինես,
 Եթէ դու նըրա ճամբիցը շեղուես:
 Հարձմ լինի իմ կերած-խըմածը,
 Թէ չկատարեմ իմ խոստացածը:
 Ա՛յ, լըսիր, նանի: Հէնց այսօր ևեթ
 Ես պիտի խօսեմ հօրեղբօրըս հետ:
 Պիտ ասեմ իրեն. «Վ էր Մըհերը.
 Գառնարած էր նա թէ Սասմայ տէրը:
 Ու նա էլ կ'ասի. «Սասմայ թագաւոր.»
 Ու ես էլ կ'ասեմ. եթէ թագաւոր,
 Հապա ի՞նչպէս է, որ նըրա որդուն
 Թողիր, որ մընայ անտէր ու անտուն,
 Բաւական չէ, որ հէրութիւն չարիր,
 Դեռ գառնարած էլ նըրան կարգեցիր:
 Տեսնեմ թէ նա ինչ կը տայ պատասխան:
 Ու ես էլ կ'ասեմ. է՛յ, Ձէնով-Յոնան,
 Հերիք է, ինչքան Մըհերի որբին
 Պահեցիր մըթան, խաւարի միջին...
 Իմ աչքը բացուեց, լուսացաւ աշխարհ:
 Մի ուրիշ հովիւ գըտէք ձեզ համար.
 Ձեր գառնուկներին ես ձեզ եմ թողնում.
 Ես որսկան եմ, և իմ հօրը երկըրում,
 Սեղան-սարի մօտ,
 Ուր արածում են եղնիկ ու այծեամ,
 Վաղըն առաւօտ
 Գընում եմ քեզ հետ երէներ որսամ:
 Մըհերի որդու արժանի խօսքեր:
 Իմ օրհնութիւնը լինի քեզ ընկեր:
 Հիմի խօսք չունիմ: Դընա, Տէրն ընդ քեզ:

Դիւլ.

Դաւ.

Դիւլ.

Դաւ. Գընում եմ, գընում, նանի ջան. բայց տես,
էլ ինձ չանիծես: (Գնում է:)

Պ Ա Տ Կ Ե Ր 2

Որսի-սարը: Տեսարանը ներկայացնում է բարձրաւանդակ տեղ, ուր երևում են նախկին անտառի հետքեր, կոճեր և մացառուտ: Մի բարձրութեան վրայ երևում են աւերակներ: Արեւ մայր է մտել, և կամաց-կամաց մութն ընկնում է: Գալիս է Ձէնով-Յոնանը որսորդական շորով. նրա հետ երկու որսկաններ, որոնցից մէկի մատի վրայ թառած է բազէ: Քիչ յետոյ գալիս է երրորդ որսկանը. նրա հետ երկու բարակներ: Ձէնով-Յոնանը նստում է մի կոճղի վրայ՝ հանգստանալու. յոգնածութիւնից սաստիկ հեռւում է: Միւսները պառկում կամ թեք են ընկնում այս ու այն կողմ: Ամենքը դադրած են երևում:

Ձէն.-Յոն. Սաստիկ դադրած եմ... Օ' ֆ, Տէր իմ Աստուած...

Բոլոր մարմինըս այնպէս է ջարդուած...

1-Որսկան Այս ամբողջ օրը մենք ման ենք գալիս,

Սար ու քար, ձորեր ոտի տակ տալիս:

Ձէն.-Յոն. Լաւ է, եթէ ես չհիւանդանամ

Ու այստեղ մընամ:

Է՛հ, զուր լըսեցի ես Դաւթի խօսքին.

Ի՜նչ կը վայելէր ինձ նման ծերին

Բարձրանալ սարեր, երէններ որսալ...

Վերջին անգամն է. էլ այստեղ չեմ գալ:

2-Որսկ. Ափսոս, զուր անցան մեր բոլոր ջանքեր:

Այստեղ բընաւին չկան երէններ:

3-Որսկ. Էլ ասե՛լ է պէտք: Ամեն տեղ եղանք.

Քարափ չմընաց, որ չբարձրանանք,

Խոռոչ չմընաց, որ չմըսնէինք,

Հովիտ չմընաց, որ չնայէինք.

Ոտի տակ տըւինք ամբողջ Որսասար,

Բայց երէնների հետքըն էլ չկար:

1-Որսկ. Զարմանալի է: Կարծես այս սարին

Աստուածային մի ցասում է դիպել,
կամ զարհուրելի կըրակ է անցել
եւ այրել բոլոր շնչաւորներին:

Ձէն.-Յոն. Մուկըն ընկնում է, Դաւիթը չկայ:

Տեսնես մեր խենթը իրտեղ է հիմա:
3-Որսկ. Նըրա հետ էի մի թեք ժայռի տակ.
Յանկարծ ինձ թողեց և արագ-արագ
Բարձրացաւ. կարծեմ, ինչ որ բան տեսաւ.
Ու այնուհետև աչքիցըս կորաւ:

Ձէն.-Յոն. Յանկարծ գլուխը փորձանք չբերի:

2-Որսկ. Դաւիթը քաջ է. ումնից ահ քաջի:
Թող թէկուզ առիւծ պատահի նըրան,
Կը խեղճացընի, ինչպէս մի գառան:

Ձէն.-Յոն. Հա, ասեմք երկիւղ չկայ գազանից.
Ես վախենում եմ ուրիշ փորձանքից:
Սաըոտ երկիր է, դարուփոս տեղեր.
Ամեն մի քայլում գահալէժ ժայռեր...
Հերիք է փոքրիկ անըզգուշութիւն,
Եւ մարդ կորած է, չկայ փրկութիւն:
Անդունդի համար խըտրութիւն չկայ.
Էլ չի հարցընում թրգուկ ու հըսկայ:

3-Որսկ. Նա կարող է և ճամբան կորցընել:

Ձէն.-Յոն. Հապա ի՞նչ—այդ էլ կարող է լինել:

3-Որսկ. Կ'ուզէք ես գընամ ու նըրան փընդուեմ:

Ձէն.-Յոն. Ո՛հ, թողէք առաջ ես նըրան կանչեմ.

Եթէ իր ճամբան կորցըրած լինի,

Իմ ձէնիս վըրայ ճամբան կը գըտնի:

(Ձէնով-Յոնանը կանգնած ձայն է տալիս: Նրա վիթխարի ձայնին գղրդալով արձագանք են տալիս շրջակայ ձորերը):

Դաւիթ, էյ Դաւիթ, որտեղ ես, որդիս:
Դաւթի ծայ. է՛յ-հէ՛յ, այստեղ եմ, գալիս եմ, գալիս:

1-Որսկ. Ահա երևաց:

Ձէն.-Յոն. Փանք Քեզ, Տէր Աստուած:

(Գալիս է Դաւիթը շալակած մի սպանուած եղնիկ, որ
նա ձգում է նրանց առաջ: Բոլորեքեան հաւաքւում են սպան-

ուած երէի շուրջը. նոյնպէս և շները հետաքրքրուած հոտոտում են այս ու այն կողմից):

Դաւ. Տեսէք ինչ սիրուն եղնիկ եմ գտնել:
Խրճուկ... ուղղակի սըրտին է դիպել:
Դեռ թրը պըրտում էր սա ճանապարհին.
Հէնց այստեղ էր, որ փըչեց իր հոգին:

Ձէն.-Յոն. Շատ խոշորն է և ինչքան գիրուկ:

Դաւ. Բա, տեսէք... Մինչև անգամ արտասուք...
Անմեղ կենդանի...

Մի ասող լինի.

«Ինչ վրնաս էիր դու տըւել Դաւթին,

Որ քեզ նետահար գըլորեց գետին»:

Տեսէք, ինչպէս է իր վիզը ծըռել,

Բիբերը մարել, վերև են թըռել...

Բայց պէտք է ասեմ, ինձ լաւ չարչարեց:

Խրճուկի օրը խիստ վատ տեղ մը թնեց.

Կամ ժայռի գըլխից պիտի վար նետուէր

Կամ էլ իր կեանքն ինձ մատաղ անէր:

Ձէն.-Յոն. Վաղուց է որսի միս կերած չէինք.

Ուրեմն էգուց մենք լաւ ճաշ ունենք:

Խորոված կ'անենք ու նրուան գինին

Անուշ անելով կ'օրհնենք Մըհերին:

(Որսկանները քաշուել են մի կողմ և պառկոտել. նոյնպէս և շները: Ձէնով-Յոնանը անթարին (վերնագգեստ) փռելով իր տակը՝ թեք է ընկնում գետնի վրայ: Դաւիթը մի պահ լռութիւնից յետոյ՝ սկսում է խօսել):

Դաւ. Բայց մի բան ասեմ, հօրեղբայր Յոնան.

Միթէ սա է ձեր հարուստ, գովական

Եւ երևելի այն Որսասարը

Ու դըրախտի պէս կանաչ անտառը:

Առանջ էլ այստեղ դատարկ էր, տըխուր,

Այսպէս անապատ ու չորս կողմը լուռ:

Ինչո՞ւ այս խեղճը մենակ էր շըրջում

Անընկեր, տըրտում... Միթէ այս սարում

Այս եղնիկըն էր միայն մընացել.

Իսկ ընկերները—հըր են գընացել:

Իջնում ես ձորը—ոչ մի շընչաւոր,
Բարձրանում ես սար—չկայ ոչ մի ձայն.
Ես չեմ հաւատում, թէ սա է իմ հօր
Այն Որսասարը՝ ընդարձակ ու լայն,
Ուր երէններին թիւ-համար չկար:

Ձէն.-Յոն. Դաւիթ, սիրելիս, այդ ամենը կար:
Այժեամ ու եղնիկ, եղջերու, պախրայ
Խըռնուած խմբերով թափառում էին
Գորգի պէս փրոռած մարգերի վրայ
Եւ սարալանջի ժառերի գլխին...
Այստեղ կար հընուց և մի եղեգնուտ,
Ուր լիք էին միշտ ահուելի կինճեր,
Որ լուաբացից մինչ իրիկնամուտ
Սըրում և յղկում էին ժանիքներ՝
Հասուն եղէգներ փրոցնելով օդում,
Որոնց աղմուկըն հասնում էր հեռուն:
Դաւ. Բայց ուր են նըրանք... ինչո՞ւ չեմ տեսնում...
Հաւքեր էլ չը կան այս անտէր երկրում.
Ոչ լոր, ոչ կաքաւ և ոչ վայրի բադ—
Չը կայ ոչ մի հատ:
Այստեղ ամեն ինչ այնպէս է մեռած,
Որ կարծես թէ կեանք բընաւ չէ եղած:
Բայց ուր է ձեր այն սիրուն անտառը,
Եւ ուր վիթխարի այն սօսիները,
Որոնց գեղեցիկ, կանաչ կատարը
Բարձրանում էր վեր, մինչև աստղերը:

Ձէն.-Յոն. Դաւիթ, հաւատա՛, անապատի տեղ,
Մի հիանալի դըրախտ էր այստեղ,
Որի նըմանը ոչ մի տեղ չը կար.
Համբաւ ունէր, որ լըցրել էր աշխարհ:
Դաւ. Բայց ի՞նչ պատահեց, ի՞նչ հըրաշք եղաւ,
Որ այդ բոլորն յանկարծ չըքացաւ.
Ի՞նչ զարհուրելի ոյժ պիտի լինէր,
Որ շէն դըրախտըն անապատ լինէր:
Ասա՛, հրէշի անունը տո՛ւր ինձ.

Այրւում է սիրտըս կրրակ ու բոցից:

Ձէն.-Յոն. Անցած գընացած բաների վրայ,

Սիրելի որդի, շատ մի՛ բարկանա:

Դաւ. Ա՛, կամենում ես ինձանից ծածկել...

Ձէ, պիտի ասես, ես կ'ուզեմ լրսել:

Ձէն.-Յոն. Մըսրամելիք է դըրա անունը:

Դաւ. Մըսրամելիքը... Մըսրայ այն շննը...

Ձէն.-Յոն. Հէնց որ նա լրսեց էլ չը կայ Մըհեր,
Փողովեց անթիւ անհամար զօրքեր,
Մըտաւ մեր անտէր մընացած աշխարհ՝
Սասում անելու գետնին հաւասար:

Կըրակ էր ընկել, վառւում էր Սասում,
Բոցըն ու ծուխը երկինք էր հասնում...

Դաւ. Բայց դժու, հօրեղբայր, հօ մեռած չէիր.

Դու այդ ամենը տեսար քո աչքով—

Եւ համբերեցիր, տարար, լռեցիր,

Վըրէժխընդրութեան բոցոտ կըրակով

Զը լըցուեց հոգիդ...

Ձէն.-Յոն. Խոհեմութիւնը լաւ բան է, Դաւիթ:

Ի՞նչ կարող էինք մենք անել, ասա.

Թըշնամին մեզ շատ նեղըն էր գըցել.

Սասմայ սարերի, դաշտերի վրայ

Մի սարսափելի բանակ էր դըրել,

Կըրակ էր թափում խեղճ Սասմայ գըլխին,

Զը կար վերջ անխիղճ կոտորածներին...

Այդ օրով էր, որ և Որսասարը

Այապէս չորացաւ,

Եւ պարըսպապատ կանաչ անտառը

Անապատ դարձաւ:

Դաւ. Մըսրամելիքի բախտիցըն է, որ

Ես այդ ժամանակ փոքրիկ էի դեռ.

Ես կը թողնէի, որ նա գար իմ հօր

Ծաղկած երկիրը քարուքանդ անէր...

Ձէն.-Յոն. Դաւիթ, միամիտ մի խօսիր այդպէս.

Նա սովորական մարդ չէ հասարակ,

ԴԱՍ.

Այլ մի աժդահան անուելի և վէս,
Ինչպէս ամբողջի գոռոզ աշտարակ:
Երբ գուրդ է գըցում Մըսուր քաղաքից,
Սակաւ է մընում հասնի Ձինմաշին.
Երբ ման է գալիս, կարծես թէ հիմքից
Սարեր փուլ եկան և կործանուեցին.
Տափը դողում է ոտների տակին:
Թող հիմա էլ նա մեր երկիրը գայ...
Մըսրամեղքից վախեցող չը կայ:
Հօրեղբայր Յոնան, քեզ մի բան ասեմ.
Իմ հօր երկիրը չը պիտի թողնեմ
Այս խեղճ դըրութեան, այսպէս անապատ.
Ծընուել ենք ազատ և լինենք ազատ:
Այստեղ նոր անտառ մենք պիտի գըցենք.
Անտառի չորս կողմ պարիսպներ քաշենք.
Նըրա մէջ նորից կեանք պիտի եռայ,
Երկիրը նորից պիտի շէնանայ:
Թող առաջուայ պէս ուրախ խըմբերով
Անթիւ երէներ այստեղ թափառեն,
Թըշամիներից իսպառ ապահով
Մարգերի վըրայ հանգիստ արածեն:
Թող աճեն, ծաղկեն ծառեր, ծաղիկներ
Եւ օդը լըցնեն անուշ գովութեամբ,
Եւ հազար ու մէկ գեղգեղուն հաւքեր
Անտառ թընդացնեն երգեցողութեամբ...
Ա՛խ, նոր անտառըն այնպէս պահեմ ես,
Նախշուն ծաղկի պէս...

Բայց ցընորք չէ սա և ոչ փուճ երազ.
Հէյ-վա՛խ, հօրեղբայր, պարտական մընաս,
Թէ որ ինձ չօգնես
Ու մենակ թողնես:

Ձէն.-Յոն. Աւելի լաւ է, Դաւիթ, որ հիմա

Մենք էլ սըրանց պէս պառկենք ու քընենք.
Իսկ առաւօտեան, երբ որ լուսանայ,
Այդ մասին քեզ հետ երկար կը խօսենք:

Դաւ. Քընիբ, հօրեղբայր, ես էլ քո մօտին
Այստեղ կը պառկեմ: Բայց ամենևին
Քընել չեմ ուզում:

(Ձէնով-Յոնանն արդէն քնած է. նոյնպէս և միւս որս-
կանները: Դաւիթը թեք է ընկել հօրեղբօր մօտ և անշարժ
նայում է մի կէտի վրայ՝ մտքերով հեռու-հեռու տարուած: Նրա
աչքերի առաջն է Մարութայ սարի ստուերագիծը, որի գագա-
թին երևում է Աստուածածնի աւերուած վանքը: Այն կողմում
Դաւիթը նշմարում է մի ճերմակ և մաքուր լոյս, որը բխում
է մարմարոնի պատառուածքից և կաթնադոյն շողեր է
տարածում իր շուրջը: Լոյսը գնալով աւելի և աւելի պայծա-
ռանում է: Դաւիթը զարմացած և սրտայոյզ վեր է կենում իր
տեղից):

Արարի՛չ Աստուած, այն ի՛նչ է այնտեղ...

Սա ոչ ճըրագ է

եւ ոչ կըրակ է,

Այլ աստղից պայծառ լոյս հըրաշագեղ:

(Դաւիթը գնում է լոյսի ուղղութեամբ և քիչ յետոյ վե-
րադառնում՝ սաստիկ այլայլուած՝ խորհրդաւոր երևոյթի տը-
պաւորութեան ներքոյ):

Հօրեղբայր Յոնան... Ի՛նչ խոր քընած է...

Ձարթեցնեմ թէ ոչ... Քանի չէ մարած,

Թո՛ղ սա էլ տեսնի... Հօրեղբայր, զարթի՛ր,

Այնտեղ մի լոյս կայ... այն կողմը նայի՛ր:

Ձէն.-Յոն. (Ձարթնելով) Դաւիթ, արթո՛ն ես, դու քը-
նած չես դեռ:

Դաւ. Ես էլ չեմ կարող քընել այս գիշեր:
Տես, այն ի՛նչ լոյս է Մարութայ սարում
Այնպէս անարատ և այնքան պայծառ...

Իր շուրջըն այնպէս է լուսաւորում,

Որ պարզ երևում է ամեն մի քար:

Տես—քանի մութը թանձրանում է,

Այնքան աւելի պայծառանում է...

Սա ի՛նչ է, ասա, հօրեղբայր Յոնան,

Ի՛նչ խորհուրդ ունի, ինչի՛ է նըշան...

Ձէն.-Յոն. (վեր է կենում եւ խաչ հանում երեսին)

Սա Աստուածային նըշան է, Դաւիթ.

Ձոքիր շուտ և խաչ հանիր երեսիդ:
 (Դաւիթը չոքում և խաչակնքում է երեսը):
 ԴԱՍ. Պօսիր, հօրեղբայր, ինչ գիտես պատմիր:
 Ձէն.- Յոն. Դէ ինձ լաւ լըսիր:

Այն բարձր տեղը, որ այնպէս պայծառ
 Հըրեղէն լուսով լուսաւորուած է,
 Կանգնած էր առաջ մի սիրուն տաճար,
 Որ հիմա քանդուած և աւերուած է,
 Անգուգական էր, հրաշալի էր նա,
 Նըմանը չը կար մեր ամբողջ երկրում.
 Գըմէթի խաչը, Դաւիթ, համարեա
 Մինչև կապուտակ երկինք էր հասնում:
 Եւ դուռ ունէր նա— մի ըսքանչելիք.
 Այնքան նուրբ, շրքեղ, այնքան գեղեցիկ...
 Ամենահմուտ վարպետի ձեռքով
 Վերկից ներքև ծածկուած զարդերով...
 Իսկ ներսը, ներսը... Ինչ պայծառութիւն...
 Ուղիղ երկնային մի արքայութիւն:
 Թէ կամարներում և թէ պատերին
 Քանի հատ ասեմ պատկերներ կային,
 Այնքան գեղեցիկ և նուրբ նկարած,
 Կարծես կենդանի առաջիդ կանգնած...
 Բոլոր սիւները— սրբատաշ քարից,
 Միաձոյլ, ասես՝ հալած ու թափած,
 Եւ խարխիւներից ու խոյակներից
 Ըզմայլում էր մարդ և մընում ապշած,
 Թէ ուր կարող է հասնել մեր հոգին,
 Երբ ձըգտում է նա վեհին ու բարձրին:
 Եւ ինչ հիացք էր զանգակատունը
 Ու վերև կախած նըրա զանգերը,
 Որոնց քաղցրաձայն, զօրեղ թընդիւնը
 Լըցնում էր չորս կողմ բոլոր ձորերը...
 Եւ չէր դադարում այնտեղ օրն ի բուն
 Զերմեռանդ աղօթք և ժամերգութիւն.
 Հընչում էին միշտ և տիւ և գիշեր

Սաղմոս, շարական, հոգևոր տաղեր
 Քառսուն բարեպաշտ վարդապետների...
 Տիրամօր տօնին, ամրան վերջերում,
 Ամբողջ Սասունը այնտեղ էր լինում:
 Մարութայ սարը կենդանանում էր,
 Զարդարւում, կարծես գարնան ծաղկունքով,
 Եւ ծովի նրման ալեկոծւում էր
 Ուրախ ամբոխը՝ իրար անցնելով...
 Զորս կողմը, բոլոր ճանապարհներում
 Ուխտաւորներ է որ կը խրոնուէին՝
 Մի ծայրը կորած Սասմայ կիրճերում
 Եւ միւս ծայրը՝ Մարութայ գլխին...
 Ա՛խ, անդառնալի, երջանիկ օրեր...
 Այնտեղ տրխրութիւն ասածըդ չկար.
 Եւ ուրախ էին թէ մանուկ թէ ծեր
 Ժողովրդական այն տօնի համար:
 Այնտեղ ընդհանուր ուրախութեան մէջ
 Իւրաքանչիւր ոք թէ կին և թէ մարդ
 Թաղում էր բոլոր հոգսերըն անվերջ
 Եւ ինչքան սրբտում ունէր ցաւ ու դարդ—
 Ամենքըն ուրախ, ամենքը զըւարթ:
 Ա՛խ, երնէկ ես էլ, հօրեղբայր Յոնան,
 Տեսած լինէի գոնէ մէկ անգամ:

Դաւ.

Ձէն.-Յոն.Ի՞նչ խառն բազմութիւն, ի՞նչպիսի աղմուկ...
 Այստեղ աշուղի սազըն ու տաղը,
 Այնտեղ դափ-զուրնան կամ թէ մեղմ տուգուկ,
 Եւ ջահէլ խըմբի պարըն ու խաղը:
 Մի տեղ, կը տեսնես, վրտանգի դիմաց,
 Անթիւ թըլիսմներ ուսերից կախած՝
 Լարախաղացը ճարպիկ ոստիւնով
 Անցնում է արագ ձրգուած պարանով,
 Նըստում, վեր ցատկում, ինչպէս սատանայ,
 Եւ յանկարծ, կարծես թոկից ընկնելով,
 Գլըխիվայր կախւում մի ոտքի վրայ:

Իսկ խենթը ներքև՝ նրա ծաղրածուն
 Հետևում է իր հրմուտ վարպետին
 Եւ հարթ-հաւասար ու փափուկ գետնին
 Նրա պէս ցատկում, վազում, գլորում
 Եւ հիանում իր հնարքի վրան,
 Ի մեծ ցընծութիւն խրըռած բազմութեան:
 Մի կողմ՝ ըսկեսուր և հարս ու աղջիկ
 Մատաղի համար կրակ են անում,
 Միւս կողմ՝ նըստոտած են ծալապատիկ
 Ու եփած տաք-տաք մատաղըն ուտում,
 Իսկ վանքի առաջ ինչ գոռում-գոչում...
 Ճամբան կը դառնար մի վաճառանոց.
 Մըրգավաճառը՝ առաջը դըրած
 Պըտուղներով լի քանի մի կըթոց՝
 Գովում էր ձէնով իր հետը բերած
 Անուշ խաղողը, կարմիր, խընձորը,
 Շաքարի տանձը, մալաս-սալորը,
 Մեղրահամ սեխը և այն բոլորը,
 Ինչով որ մեր Տէր Աստուած Երկնային
 Լըցրել է առատ գեղջուկի այգին:
 Իսկ տաճարի մէջ հօ էլ տեղ չը կար.
 Սուրբ պատարագը տեւում էր երկար.
 Ոչ մէկը ժամից հէջ զուրկ չէր մընում.
 Մինը մըտնում էր, միւսը եխում:
 Ափոս Մարութայ սուրբ Աստուածածին,
 Ափոս, որ հասար այս խեղճ վիճակին...
 Բայց ինչ պատահեց:
 Երկիրը շարժուեց,
 Թէ դարձեալ Մըսրայ մոլի գազանը...

Դաւ.

Ձէն.-Յոն.Այո, նա քանդեց այս մենաստանը.
 Եւ, մեր հոյակապ տաճարի տեղակ,
 Թողեց մեզ համար մի խեղճ աւերակ:
 Բայց սըրբութիւնը սըրբութիւն մընաց.
 Ու նրա մարմար սեղանի վրան
 Պայծառ, հըրեղէն մի լոյս երևաց,

Դաւ.

Իբրեւ Տիրամօր անարատ նըշան:
 Հօրեղբայր Յոնան, տես, էլ «չէ» չը կայ.
 Մարութայ վանքը, Աստուած է վըկայ,
 Մենք շուտով պիտի վերանորոգենք.
 Իսկ Որսի-սարը առայժմ թողնենք:
 Երդուում եմ, իմ հայր, քո գերեզմանով,
 Տաճարը ոտի կը կանգնի շուտով:
 Պիտի մոռանամ, թողնեմ այսուհետ
 Որսորդութիւնըս իմ աղեղ և նետ,
 Բոլոր եռանդով և ամբողջովին
 Նըւիրուեմ պիտի ես իմ սուրբ գործին:
 Իսկ դու, հօրեղբայր, ինձ պէտք է օգնես:
 Հէնց որ կը ծագի վաղուան արեգակ,
 Մարութայ գըլխին պիտի ժողովես
 Հարիւր հատ վարպետ, հազար հատ մըշակ:
 Որ սուրբ տաճարի նոր հիմքը դնեն:
 Աշխատանքներին կը հրակեմ անձամբ
 Եւ միայն այն օր սարիցը կ'իջնեմ,
 Երբ վանքը նախկին իր գեղեցկութեամբ
 Մարութայ գըլխին կանգնած կը տեսնեմ:
 Մենք չենք խընայի ո՛չ փող և ո՛չ ջանք,
 Բայց փոխարէնը կը շինենք մի վանք,
 Այնքան փառաւոր և այնքան պայծառ,
 Որ իր համբաւը տարածուի աշխարհ:
 Արեւս վըկայ, թէ հընար լինէր,
 Ձուլել կը տայի այնպիսի զանգեր,
 Որ, երբ վերհատեն, նըրանց զիւ ձայնից
 Զարթնէր թըշնամին իր քաղցը քընից:

Ձէն.-Յոն. Դաւիթ, ձեռ վեր առ դու այդ քո մըտքից:

Եօթը տարի է, որ Մըսրայ տէրը
 Մոռացել էր մեզ խարջ չէր պահանջում.
 Եօթը տարի է, հարկահանները
 Մասմայ աշխարհում չէին երևում.
 Իսկ եթէ հիմա վերանորոգենք
 Աւերուած վանքը, առաջուայ նըման,

Նրա սրբազանը կըրակ կը վառենք
 Մի զարհուրելի վրէժխնդրութեան:
 Ասկարը կ'առնի, մեզ վրայ կը գայ
 Եւ ամբողջ Սասուն ոտի տակ կը տայ:
 Դաւ. Թող գայ. նրանից ես չեմ վախենում.
 Եւ խօսքիս վրայ հաստատ եմ մընում:
 Զէն.- Յոն. Մեր մեծ աղէտի պատճառ կը դառնաս
 Ու յետոյ, Դաւիթ, սաստիկ կը զրղջաս:
 Դաւ. Ինչ որ էլ ասես, վաղ առաւօտեան
 Պիտի ձեռք զարկենք վանքի շինութեան:
 Եւ, մեր Տիրամայր սուրբ Աստուածածին,
 Եղի՛ր օգնական նորելուկ Դաւիթին:

Պ Ա Տ Կ Ե Ր Յ

Մարմելիքի ապարանքը: Մի դահլիճ, որի պատերը և
 դմբեթաձև առաստաղը գոյնզգոյն ապակիներից են, որոնց շնոր-
 հիւ սենեակը ստանում է մի տեսակ կախարդական բնաւոր-
 ութիւն: Յատակը մարմարեայ: Դահլիճի ճակատին դրուած է
 դահլիճ: Պատի վրայ կախուած են զէնք ու զրահ՝ նետ-աղեղ,
 կապարճ, գուրգ, նիզակ, վահան, սրեր: Կան նաև զարդարանք-
 ներ՝ եղջիրներ, վագրի մորթի, անօթներ մարդկային գանգից՝
 արծաթապատ և քանդակագործ, վարագի ժանիքներ՝ թելի
 վրայ կախած:

Մարմելիքը՝ շքեղ, գոյնզգոյն զգեստով, գօտիով, կեռ
 սուրը կապած և գլխին չալմա՝ ադամանդներով զարդարած՝
 առօք-փառօք բազմել է դահլիճի վրայ և շփում է երկայն ալիսա-
 ուն մօրուքը և մինչև ակաջները տարած բխերը: Ինքը խո-
 ժողողէմ է, թխագոյն և աչքերը սև ու դաժան:

Մտնում է մի թիկնապահ և դռան մօտ կանգնում:
 Թիկն. Հըզօր խալիֆա, քո խոնարհ ծառան՝

Քաջ Կոսբաղինը սպասում է դռան:

Մարամ. Թող ներս գայ շուտով:

(Թիկնապահը գնում է: Մտնում է Կոսբաղինը, մօտենում

է գահին և չոքելով պատուանդանի վրայ՝ համբուրում է Մըս-
րամեղի փէշը):

Կոստանդին բարով:

Կոս. Արեգակնափայլ անյաղթ իմ արքայ,
Մի տըխուր համբաւ Սասմայ աշխարհից:

Մսրամ. Լըսում եմ, ասա:

Այդ երևում է քո մըռայլ դէմքից:

Կոս. Շըրջազայեցի, ըստ քո հրամանին,
Քո մեծ տէրութեան բոլոր ծայրերը:

Մսրամ. Եւ ինչպէս գըտար:— Ամեն տեղ կարգի՞ն:

Կոս. Այո, թող վըստան լինի իմ տէրը.

Ամեն տեղ հանգիստ և խաղաղութիւն,

Եւ ժողովուրդը հազար բերանով

Փառաբանում է քո օրհնեալ անուն՝

Երջանիկ, ուրախ և միշտ ապահով:

Բայց միայն մի տեղ, միմիայն Սասում

Ես նըկատեցի ինչ որ խըլըրտում...

Մսրամ. Ի՞նչ տեսար այնտեղ, ի՞նչ գիտես, ասա:

Կոս. Դեռ մի առանձին մեծ վըտանգ չը կայ.

Ձը կայ, բայց յետոյ կարող է լինել:

Մըհերի որդին գլուխ է բարձրացրել:

Մսրամ. Այն խելառ տըղան, այն խոզարածը...

Կոս. Այո, տէր արքայ, այդ անիծուածը:

Մսրամ. Ափսոս, որ այդ չար օձի ձագուկին

Ես չը սպանեցի իր ժամանակին,

Երբ որ նա անխեղ երեխայ էր դեռ...

Հիմա նա վաղուց փըտած կը լինէր:

Կոս. Իր ժողովրդի գըլուխըն անցած՝

Անում է, ինչ որ սիրտըն ուզում է,

Ժողովուրդըն էլ, ուղիղըն ասած,

Նըրան կուռքի տեղ երկըրպագում է,

Դաւթի անունով երգում է ուտում

Եւ Սասմայ իշխան ու տէր համարում:

Մսրամ. Օհօ, մոռացան Մսրամեղիքին...

Ես դըրանց խեղի կը բերեմ կըրկին:

- Կոս. Յիշում ես, տէր իմ, Մարութայ վանքը,
Որ համարում էր Սասմայ պարծանքը.
Եւ հրպարտ կանգնած սարի կատարին
Հասնում էր կապոյտ երկնակամարին:
Երբ վերջին անգամ ասպատակեցինք
Սասմայ երկիրը սրբով և հրբով,
Այն վանքն էլ մենք քարուքանդ արինք՝
Գրմբէթը գետնին հաւասարելով:
- Մսրամ. Եւ մընաց միայն մի խեղճ փըլատակ:
- Կոս. Բայց հիմա արդէն փըլատակի տեղ
Կանգնած է մի նոր տաճար փառահեղ,
Որի զանգերի ուժգին ձայները
Հասնում են մինչև Մսրայ սարերը:
- Մսրամ. Բայց ո՞վ յանդըգնեց, առանց իմ կամքի,
Ձեռ զարկել մի նոր տաճարի շէնքի:
- Կոս. Էլ ո՞վ կ'անէր այդ—միայն Դաւիթը,
Սասմայ պաշտելի և քաջ իգիթը:
- Մսրամ. Բայց նա չէր կարող, չէր համարձակուի...
Միթէ չէր լրսել Մսրամեղիքի
Վիթխարի ոյժը, կարողութիւնը,
Միթէ չէր լրսել նա իմ անունը...
- Կոս. Եթէ գըլխումը քիչ խեղճ ունենար,
Նա այդ չար գործից հեռու կը մընար:
- Մսրամ. Բայց ի՞նչպէս է, որ մենք չենք իմացել:
- Կոս. Կարճ միջոցում են տաճարը շինել:
Վըրան բանել են եօթն օր շարունակ
Հարիւր հատ վարպետ, հազար հատ մըշակ:
- Մսրամ. Եւ հիմա պատրաստ է բոլորովին:
- Կոս. Ինչպէս չէ, մինչև անգամ օծեցին.
Էն էլ ի՞նչ շքով,
Ի՞նչ մեծ հանդիսով...
Ես հեռու կանգնած տեսայ բոլորը.
Դըրանց ծէսերը, դըրանց թափորը,
Խաչ ու խաչվառը,
Խունկ ու բուրվառ...

- Լըսեցի դրբանց ժամերգութիւնը,
 Վանքի զանգերի ուրախ թընդիւնը...
- Մ'սրամ. Լըսիր, Կոսբաղին: Հէնց վաղըն և եթ
 Ճանապարհ կ'ընկէք Ջարխաղինի հետ
 Դուք դէպի Սասուն:
 Շատ կարճ միջոցում
 Հարկատու երկրից պիտի ժողովէք
 Եօթ տարուայ խարջը—քառասուն բեռ ոսկի:
 Բայց չը լինի թէ դուք ականջ դրնէք
 Աղաչանքների կամ արտասուքի...
- Կոս. Անհոգ կաց, իմ տէր, և վրստան եղիր.
 Քառասուն բեռ ոսկին պատրաստ համարիր:
- Մ'սրամ. Ես ձեզնից կուզեմ և քառասուն աղջիկ
 Ազապ, գեղեցիկ.
 Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան
 Եւ քառասուն երկայն, որ ուղտեր բառնան:
 Բայց անձ ձեզ իմ խիստ հըրամանը.
 Մինչև բոլորը պատրաստ չը լինի,
 Սասումից ելնել, անցնել սահմանը
 Ոչ որ ձեզանից իրաւունք չունի:
- Կոս. Հըզօր ալլահի օգնականութեամբ
 Քո տըռած բոլոր պատուիրանները
 Ես կը կատարեմ խստիւ, ճըշտութեամբ,
 Եւ գոհ կը մընայ իմ բարի տէրը:
- Մ'սրամ. Իսկ գալով Դաւթին, ձեռ-ոտըն ամուր
 Կապկապած՝ ձեզ հետ կը բերէք Մըսուր:
- Կոս. Վաղ առաւօտեան կ'եխենք անպատճառ:
- Մ'սրամ. Բարի ճանապարհ:
- Կոս. Բարով մընաս, տէր: Թո՛ղ մեծ ալլահը
 Հաստատուն պահի քո ոսկի գահը:
 (Կոսբաղինը գնում է)

Պ Ա Տ Կ Ե Ր 4

Գիւլնազի բանջարանոցը, ուր բուսել է շաղգամ: Աջ կողմում երևում է խրճիթը՝ փակուած դռնով, գալիս են Մարամեւիքի հարկահանները՝ Բադին և Սիւդին: Սրանց առաջնորդում է Ձէնով-Յոնանի կողմից մի պահապան: Բոլորն էլ զինուած են: Պահապանը բաղխում է խրճիթի դուռը:

Պահ. Պառան, էյ պառաւ, արի դուռը բաց:
Գիւլ. (դրան ետեւից) Աստուած տայ, Աստուած: Ո՛չ փող
կայ ոչ հաց:

Պահ. Հաց ուզող չը կայ.
Դուռը բաց արան:

(Գիւլնազը կամենում է բաց անել դուռը, բայց նկատելով զինուած մարդիկ՝ ճշալով և վախեցած դուռն իսկոյն դուրս է):

Բադ. Ի՞նչ կայ վախեցար,
Ա՛յ յիմար քաւթան:

Սիւդ. Բաց արա, թէ չէ՝ կրճնկահան կ'անեմ,
Քացի կը տամ ու դուռըդ կը կոտրեմ:

Գիւլ. (զլուխը հանելով) Սրանք ո՞վքեր են:

Պահ. Մըսրացիներ են:
Եօթ տարուայ խարջը եկել են տանեն:

Գիւլ. Ես ոչինչ չունիմ... Ի՞նչ պիտի առնեն...

Բադ. Ոսկիքդ հանիր բեր այստեղ շուտով,
Եթէ չես ուզում, որ խըլենք զուռով:

Գիւլ. Ա՛յ անաստուածներ, դուք ի՞նչ էք ուզում
էս կերած-կորած անտէր պառաւից:
Ինչի՞ էք եկել դրոներըս կոտրում.
Ինչ պահանջ ունիք, արէք հարըստից:
Ինձ պէս աղքատին ո՞վ է փող տրուել,
Որ եկել էք իմ դրուանըս կանգնել:
Տունըս դատարկ է: Մի պղինձ չը կայ
Ազիզ օրերը կերակուր եփեմ.
Կայ մենակ մի հին, ժանգոտած կաթսայ,

- էն էլ փող չունեմ գոնէ կըլեկեմ:
 Մի խըսիւր չունիմ, որ փրոնեմ տակըս,
 Զըմեռուայ ցըրտին գետնին եմ պառկում,
 Մի փայլաս է իմ վըրի վերմակըս—
 Փաթաթւում եմ ու կըծիկ եմ դառնում:
 Ախր ի՜նչ անեմ, ինչի՜ս էք կարօտ,
 Որ էդքան հոգով եկել էք ինձ մօտ:
 Դու սո՛ւտ ես, լըռի՜ր, զգու՛սի ջադու՛.
 Ես չեմ իմանում, թէ ո՞վ էի՜ր դու:
 Երբ որ Մըհերը կենդանի էր դեռ,
 Մեզանից ամեն մէկըն էլ գիտէր,
 Որ դու սիրականն էի՜ր Մըհերի,
 Որին դարձըրել էի՜ր քեզ գերի:
 Տունըդ շրջեղ էր պալատի նըման,
 Զարդարւում էի՜ր անգին քարերով,
 Ապրուստ ունէի՜ր թագաւորական,
 Մընդուկներըդ լի ոսկով-արծաթով:
 Հագածըդ էր միշտ բեհեզ ու դիպակ,
 Կերած-խըմածըդ—մեղըր ու կարագ:
 Բայց Մըհեր մեռաւ, ու Մըսրայ տէրը
 Ներս թափեց Սասում բոլոր զօրքերը.
 Ի՜նչ որ ունէի, յափշտակեցին,
 Բեհեզ ու դիպակ, ոսկի ու արծաթ,
 Տունըս քանդեցին և կըրակ տըւին,
 Ի՜նձ էլ դարձըրին մի ետին աղքատ:
 Միւղ... Դէ բերում ես, բեր, թէ չէ... հօ գիտես...
 Գիւլ... Անհաւատ, անգո՛ւթ, խըղճմըտանք չունե՜ս:
 Բաղ... Եկէ՛ք ներս մըտնենք
 Ու զոռով առնենք:
 (Բաղինը կամեցում է մտնել խճիթը, Գիւլնազը՝ շէմ-
 քումը կանգնած՝ աշխատում է արգելել):
 Գիւլ... Հեռո՛ւ էստեղից... չեմ թողնի մըտնէք...
 Բաղ... Կորի՜ր... Պառաւի ձայնը կըտրեցէք...
 (Սիւղինը խփում է Գիւլնազին, որը վայր է ընկնում գե-
 տին և ուշաթափ մնում է մի քանի րոպէ: Սիւղին, Բաղին և

պահապանը մտնում են խրճիթը և դուռը ծածկում: Գիւլնազը կամաց կամաց ուշքի է գալի և վեր կենում):

Գիւլ. Ցանկա տանէք դուք, գոյ աւագակներ,
Անաստուած, անխիղճ, անհաւատ շրներ...
Ձեր ոտը կոտորուէր ճամբին մընայիք,
Դուք էիք պակաս ինձ կողոպտէիք...
Աստուած, դու արա սրանց դիւանը,
Մի վերջ տուր սըրանց դազանութեանը...

(Դուռն են գալիս խրճիթից Բադին, Սիւդին և պահապանը):

Բադ. Վա, մենք կարծեցինք, որ էս քաւթաուր
Արդէն գընացել է էն աշխարհը...

Ո՛չ, կենդանի է ու հաչում է դեռ:
Ոսկին հօ առանք, դէ գընա ու կեր:
Գիւլ. Վայ ինձ... քոռանամ... դա իմ բալուկիս
Վըզի խաչըն է կընքահօր բերած...
Լոյս դառաւ, գընաց սիրուն աղանիս,
Էդ յիշատակըն ինձ միայն մընաց:
Տուր ինձ, ետ տուր ինձ իմ աչքիս լոյսը,
Իմ ուրախութիւնն ու միակ յոյսը...
Լաւ է ինձ մորթես, կենդանի թաղես,
Քան թէ դըրանից յաւիտեան զըրկես:
Սըրբեցէք տունըս, բոլորը տարէք,
Միայն թէ, ի սէր ձեր գաւակներին,
Էդ խաչը, մենակ էդ խաչը թողէք...
Խընայեցէք ինձ, իմ ծեր հասակին...
Տես, ոտքդ ընկած ես աղաչում եմ,
Մի տանիր, ետ տուր, ոտդ պագնում եմ...

Բադ. (հրելով) Հէր ես կոճղի պէս ընկել ոտի տակ...

Սիւդ. Բան ասաց սա էլ. «որդուն յիշատակ»:

(Միծաղելով գնում են: Գիւլնազը չարանում է, վիռկի պէս, և սկսում է անիծել նրանց յետեից):

Գիւլ. Վայ ինձ, ինչ անեմ, հոգըն իմ գըլխին...
Գողացան, տարան, յաւիտեակեցին...
Ա՛խ, թող էդ խաչը քո աչքն հանի,
Էսքան էլ անգութ գազան կը լինի...

Տեսնեմ, որ ազիզ ձեր բալուկներին
 Մի նաժուռ դրած՝ մի օրում թաղէք,
 Բուերի նրման վայ տաք ձեր գլխին,
 Ձեր կեանքում ուրախ մի օր չտեսնէք...
 Սուգ ու շիւանը, լաց ու կակիծը
 Անպակաս լինի ձեր օջախիցը...
 Թըշնամիների սուր-սուր նետերը
 Փըշերի նման ցըցուեն ձեր մարմնում,
 Ձեր միսը լափեն շուն ու գէլերը,
 Ինչպէս որ դուք մեր միսըն էք ուտում...
 Ձեր յիշատակը ջրնջուի՝ աշխարհից,
 Որ մենք ազատուենք ձեզ պէս շրեբրից...

(Մանում է խրճիթը: Գալիս է Դաւիթը):

Դաւ. Մասմայ գիւղերը ծայրէ ծայր անցայ...
 Եւ ինչքան, ինչքան նոր բան իմացայ...
 Ինչ որ ես լրսել էի ականջով,
 Հիմա բոլորը տեսայ իմ աչքով:
 Ինչպէս է քանդել Մըսրայ գազանը
 Իմ հօր երկիրը, իմ սուրբ վաթանը...
 Եւ քանի տարի դեռ պիտի անցնի,
 Մինչև որ Սասում նոր մէկանց ծաղկի...
 Եւ նա կը ծաղկի, կ'աճի օրէցօր
 Իմ հայրենական երկիր փառաւոր:
 Աստուած, զօրացրո՛ւ իմ միտք ու հոգին,
 Որ լաւ ծառայեմ իմ ժողովրդին:

(Դաւիթը պոկում է մի շաղգամ և սկսում է ուտել: Խըր-
 ճիթից դուրս է գալիս Գիւնազը):

Գիւլ. Ապրէշ, հիմի էլ շաղգամից կըպար...
 Արաբիչ Աստուած, էսքան էլ խելառ...

Դաւ. Նանի ջան, ներիր, քաղցած էի ես:

Գիւլ. Շաղգամի տեղակ դու զըխկուն ուտես,
 Չոռ ու ցաւ ուտես:

Դաւ. Էս մի շաղգամով դու աղքատացած,
 Որ էլի էդպէս սաստիկ չարացար:

Գիւլ. Աստուած, ազատիր ինձ սըրանց ձեռից,

Թալանում են ինձ, գրքում չորս կողմից,
 Սրբանց հր մէկին պատասխանը տամ.
 Էսքան դարդերին ես հնց դիմանամ...
 Հերիք չէր լասես դրսի թըշնամին,
 Տանջւում ենք և մեր երկրացու ձեռին...
 Ա՛խ, Մհեր, Մըհեր, լուս հոգի Մըհեր...
 Քո որդին միթէ սա պիտի լինէր...
 Ոչ ամօթ մընաց աշխարհում, ո՛չ գութ.
 Ամեն տեղ ալան-թալան, կողոպտու:
 Լաւ, նանի, Դաւթին դու մի հաւանիր,
 Եւ նըրան, ինչքան կուգես, հայհոյիր.
 Բայց երբ գործերըս աչքով կը տեսնես,
 Իմ մասին ուրիշ լեզուով կը խօսես:
 Ո՞վ վերականգնեց այն գեղեցկաշէն
 Մարութայ վանքը—Սասմայ ապաւէն.
 Ո՞վ պիտի նորից կանաչացնի
 Սեղան-սարի մօտ իմ հօր անտառը,
 Պարիսպներ քաշի, երէներ լըցնի,
 Կենդանացնի հին Որսասարը...
 Եւ անդ է միայն Այնպէս ծաղկեցնեմ
 Անապատ դառած մեր խեղճ վաթանը,
 Գիւղեր, աւաններ այնպէս շէնացնում,
 Որ ճաքի Մըսրայ գողոյ իշխանը...
 Եթէ Մըհերի որդին լինէիր,
 Դու կը թողնէիր,
 Որ էն անօրէն մըսրացիները
 Գողերի նըման գան մեզ կողոպտեն,
 Օրը ցերեկով մըտնեն տըները,
 Մեր ունեցածը խըլեն ու տանեն...
 Ի՞նչ է պատահել, թէ Աստուած սիրես:
 Հօրեղբօրդ մօտ գընա—կը տեսնես:
 Մըսրամեղքի քաղցած գէլերը
 Սուրութուր առած՝ մըտել են Սասում,
 Կըրում տանում են մեր ոսկիները,
 Մեր եօթը տարուայ խարշը ժողովում—

Դաւ.

Գիւլ.

Դաւ.

Գիւլ.

- Քառասուն բեռ ոսկի, քառասուն կոյս աղջիկ,
 Քառասուն հատ երկայն, քառասուն կարճ կրնիկ:
- Դաւ. Այ քանդուի՜ Մըսուր... Ուղիղ ես ասում:
- Գիւլ. Աղքատ ու հարուստ էլ չեն հարցընում:
 Ինձ մօտ էլ եկան... Մի քացի տըւին,
 Որ ես ուշագնաց՝ փըռուեցի գետին:
- Դաւ. Յետոյ, քեզանից էլ մի բան առան:
- Գիւլ. Աղջըկաս խաչը խըլեցին տարան:
- Դաւ. Հէյ-վայ... Իսկ ես դեռ ոչինչ չգիտեմ...
- Գիւլ. Նանի ջան, դըրանց ես ռոտեղ գըտնեմ:
- Դաւ. Հօրեղբօրըդ մօտ: Նըստած են բակում
 Եւ կուտըն առած՝ ոսկի են չափում:
- Դաւ. Շո՛ւտ արա՛, Դաւիթ, հասի՛ր օգնութեան.
 Եկել է ժամը վըրէժխընդըութեան...
 Ասիւ՛ծ—Մըհերի որդի՛ն չը լինես,
 Եթէ դու դըրանց անպատիժ թողնես:
 (Դաւիթն արագ հեռանում է):

Պ Ա Տ Կ Ե Ր 5.

Ձէնով-Յոնանի տան բակը: Ձախ կողմում տունն է, որի ստորին յարկը պատշգամբով: Տան հանդէպ մարազն է՝ փակուած դռնով: Մէջտեղ ծառաստան: Հանդիպակաց կողմում բարձր պարիսպ՝ գոցուած դարպասով: Պատշգամբում դրուած են ոսկով լի տոպրակներ. մուտքի երկու կողմից կանգնած են մարացի պահապաններ՝ զինուած նիզակներով: Մի ծառի տակ դրուած է նստարան, որի վրայ նստած է Ձէնով-Յոնան՝ գլուխը կռացրած և ձեռքով բռնած ճակատը: Ծառերի ետեւից դաւիթ է Ձէնով-Յոնանի ծառան:

- Ժառ. Գինին վերջացաւ: Գինի են ուզում:
- Ձէն.-Յոն. Ինչքան կ'ուզեն, տա՛ր: Հէ՛ր ես հարցնում:
- Ժառ. Ո՞ր գինուց տանեմ՝ կարմիր թէ՛ ճերմակ:
- Ձէն.-Յոն. Իրենք չասացի՞ն քեզ, թէ՛ ի՞նչ տեսակ:
- Ժառ. Ասացին միայն, թէ՛ «ամենահին»:

Ձէն.-Յոն. Կայ տասը տարուայ մի գինու կարաս.
Մառանում թաղուած. թէև այդ գինին
Դըրանց հարամ է, բայց, էհ, ի՞նչ վընաս...
Վերցըր՝ու կուժը, գընա՛ մառանը
Լըցըրու լիք-լիք մինչև բերանը
(Մառան գնում է):

Աւելի լաւ է սըրտները շահեմ,
Որ մեր երկրիցը ուրախ հեռանան,
Քան թէ սըրանցից գինի խընայեմ,
Թող իրենց տեսած յարգ ու պատիւը
Մի առ մի պատմեն Մըսրամելիքին,
Իցէ թէ Սասմայ բաղդի անիւր
Չարիցըն անցնի, պըտըտի բարին:
(Փողոցում լսելի է աղմուկ):

Ձայներ դըսից. Բաց արա՛ դուռը... էյ... Ձէնով-Յո-
նան...

(Խփում են դրան):

Ձէն.-Յոն. (Դռնապանին) Այդ ի՞նչ աղմուկ է... Ո՛վ
խըփեց դռան...

Դռնապ. Ժողովուրդըն է խըմբուել փողոցում.
Որը լալիս է, որըն անիծում:

Ձէն.-Յոն. Դուռը բաց չանես: էյ, բարեկամներ,
Աւելի լաւ է, քաշուէք ձեր տըներ:
Իզուր էք լալիս, իզուր բառանչում,
Հորթերը կորցըած կովերի նման,
Իզուր էք «մայրիկ» ու «աղջիկ» կանչում.
Նըրանք ձեզ համար կորան յաւիտեան:

(Փողոցում աղմուկը սաստկանում է: Կանանց աղաչանքը
կամ անէծքը, մանկանց ձիչն ու լացը, տղամարդկանց սպառ-
նալիքը—բոլորը միախառնուել են և մի սարսափելի, դժոխային
ժխոր առաջացել):

Ոչինչ չեմ կարող անել, սիրելիք.

Իզուր են և լաց և ըսպառնալիք:

(Ճաշից վեր կացած՝ գալիս են Կոստադին, Չարխադին,
Բադին և Սիւդին. բոլորն էլ գինու ազդեցութեան տակ են):

Կոս. Եոնան, մաշալլա, լաւ պատուեցիր մեզ:

Շընորհակալ եմ, կեցցեն դու, կեցցեն:
 Չարխ. Ի՜նչ տեսակ տեսակ համեղ խորտիկներ,
 Ի՜նչ հիանալի, անուշ գինիներ:
 Ձէն.-Յոն. Ձեզ պէս թանկագին հիւրերի համար
 Ձէնով-Յոնանը ծառայ է խոնարհ:
 Կոս. Դէհ, բարեկամներ, հիմա ըսկըսենք:
 Մընաց չը չափուած երեք բեռ ոսկին.
 Այդ էլ մենք այսօր կը վերջացընենք
 Եւ վաղ առաւօտ արեւածագին
 Մեր մեծ քարվանսով ճանապարհ կ'ընկնենք:
 (Վերցնում է կուտը):
 Չարխագին, պահիր: (Չափում է). Մէկ, եր-
 կու, երեք...

(Փողոցում աղմուկը աւելի և աւելի սաստկանում է: Ամբոխի միջից լսելի է Դաւթի ձայնը):

Դաւթի ձայնը. Հեռացէ՛ք, ճամբա՛, ինձ ճամբա տրուէ՛ք:
 (Դուռը սկսում են չարչարել):

Դաւթի ձայնը. Դուռը բաց արա, հօրեղբայր Յոնան:

Կոս. Պինդ պահիր դուռը, է՛յ դու, դըռնապան:
 Է՛յ պահապաններ, զգաստ, պատրաստ կացէ՛ք:

Դաւթի ձայնը. Կոտրեցի՛ր դուռը—դժուր բաց արէք.

Ձէն.-Յոն. Դաւիթ, քեզ մատաղ, զընա, հեռացիր:

Ձայներ դրսից. Տըւէք դըռանը... դէ՛ խըփիր... Չար-
 դիր...

(Ուժգին հարուածներից դուռը վայր է ընկնում: Մտնում է Դաւիթը՝ ահելի իր դէմքի արտայայտութեամբ: Նրա ետեւից ներս է խուժում ամբոխը-խառնիճաղանձ բազմութիւն՝ ծեր, մանուկներ, կանայք, աղջկերք, երիտասարդներ: Դիմադրող պահապաններին աջ ու ձախ հասցրած հարուածներով գլորում է գետին: Յետոյ Կոսթաղինի ձեռքից խլում է կուտը):

Դաւ. Չափել չգիտէք... թողէ՛ք ես չափեմ...

Մէկ, երկու, երեք, չորս—և վերջ արդէն:

(Ամեն անգամ կուտով խփում է Կոսթաղինի և միւս երեք մարացիների երեսներին և արնոտում նրանց դէմքերը: Ձէնով-Յոնանը սարսափած բռնում է Դաւթի ձեռքից և աշխատում է նրան պահել):

Ձէն.-Յոն. Դաւիթ, խեղճ եկ, այդ ի՜նչ ես անում...

Դաւ. Միթէ չես տեսնում... Ոսկի եմ չափում...

Ձէն.-Յոն. Վայ մեզ, կորած ենք...

Ձայներ. Ո՛չ, մենք փրկուած ենք...

Ձայներ. Փրկուած ենք, փրկուած...

Ձէն.-Յոն. Կորած ենք, կորած...

Դաւ. Դէ, անկո՛չ հիւրեր, ձեր եկած ճամբով
Դուք ձեր երկիրը կը դառնաք կրկին
Եւ ինչ որ այստեղ տեսաք ձեր աչքով,
Մէկ-մէկ կը պատմէք ձեզ ուղարկողին:
Թո՛ղ նա իմանայ, որ այսուհետեւ
Սասմայ երկրնքում փայլեց նոր արեւ,
Եւ, թէև չկայ դիւցազըն Մըհեր,
Նըրա զաւակը կենդանի է դեռ:

Կոս. Վայ ձեզ... ճըշմարիտ մի խօսք եմ ասում,
Երեք օր չանցած՝ կորած է Սասում...

Ձէն.-Յոն (ծնկալոյ) Ա՛խ, ներում արէք, տարէք ձեր
ոսկին,

Մի յայտնէք ոչինչ Մըսրամեկիքին...

Դաւ. (վեր կացնելով) Վեր կաց, ամօթ է, այդ ի՜նչ ես
անում...

Դու ինձ սըրանց մօտ դետին ես կոխում...

Միթէ Մըհերի եղբայրըն ես դու...

Միթէ դու նըրա անվեհեր հոգու

Կէսըն էլ չունին... Ա՛խ, Մըհեր, Մըհեր...

(Մարագից լսում են կանացի աղաղակներ և լաց ու կոծի
աղիողորմ ձայներ):

Այս ի՜նչ ձայներ են... ի՜նչ աղաղակներ...

(Մօտենում է մարագի դրան):

Նըրանք ուրեմըն այստեղ են փակուած...

Ժողովուրդ, եկէ՛ք, մի աւանջ դըրէ՛ք:

Ի՜նչ հեկեկանքներ... ի՜նչ ողբեր ու լաց...

Այս տեսակ ձայներ լսած չեմ երբէք...

Այս աղիողորմ հառաչանքներից

Քար սիրտը նոյն իսկ կը պատռուէր միջից,

Իսկ դո՛ւ, Օ Յոնան, քարից էլ վատթմր...

Ասան ինձ, ինչպէս դու կարողացար
 Այս դժոխային տանջանքը տեսնել,
 Այս կըսկըծալի վայունքը լսել,
 Եւ էլի մընալ այդչափ անըզգայ...
 Յոնան, քո սըրտում խղճմըտանք չը կայ...
 Զան, իմ քոյրիկներ, ջան, ազիզ մայրեր,
 Լըռեցէք, թողէք ձեր սուգ ու շիւան,
 Ահա—կոտորում եմ ձեր բանտի դռներ,
 Եւ հասաւ ժամը ձեր ազատութեան...

(Դաւիթը բաց է անում մարագի դուռը, որտեղից դուրս են թափւում կանայք և աղջկերք: Ամբոխը խռնւում է նրանց հետ, և խառնիճաղանձ աղմուկ է բարձրանում: Ամենքն իրար են փնտռում և միմեանց գտնելով՝ գրկախառնւում, համբուրւում են ուրախ բացազանչութիւններով. «Մայրիկ ջան», «աղջիկս», «աղիզ», «բալէս»...)

Դաւ. Դէ, ժամանակ է, ձիերըն հեծէք
 Եւ դէպի Մըսուր թըռէք գընացէք:
 Բայց մի՛ գուցէ թէ մի ուրիշ անգամ
 Սասմայ աշխարհում ձեր շողքը տեսնեմ:—
 Դիտցած եղէք, որ ես փոշու նըման
 Ձեզ իսկոյն և եթ կ'անհետացընեմ:
 (Կոստադինը իր ընկերներէ հետ հեռանում է):
 Ձայներ. Փըրկուած է Սասում... Գընաց թըշնամին...
 Կեցցէ Մըհերի արժանի որդին...

Լեւոն Մանուէլեան

(Վերջը յաջորդ համարում)